

1.this is a video - mass media coverage of 3:22 minutes in Armenian

<http://www.hottv.am/tvnews/271065>

2.Article in Armenian

<http://www.tert.am/am/news/2013/10/20/holy-see-conference/>

**Աշխատանքն է ավարտել եկեղեցի-պետություն հարաբերությունների թեմայով գիտաժողովը**

17:02 • 20.10.13



Ն.Ս.Օ.Տ.Տ. Փարեզին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողովը հոկտեմբերի 19-ին ավարտել է իր աշխատանքները, տեղեկացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգը:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում «Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունների տարբեր մոդելներն այսօր» թեմայի շուրջ բանախոսել են Սերգեյ քահանա Մատյուշինը (Ռուս Ուղղափառ եկեղեցի) և Ասատուր Նահապետյանը (Երևանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի):

«Կրոնական ազատության բնագավառում միջազգային օրենքներն ու չափորոշիչները» թեմայի շուրջ զեկույցներով հանդես են եկել դոկտոր Պետեր Կրոմերը (Ավստրիայի Ավետարանական եկեղեցու զեկավար), մագ. Էլիզաբետա Կիտանովիչը (Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս, Եկեղեցի և հասարակություն հանձնաժողովի մարդու իրավունքների գծով գործադիր քարտուղար), Եվրոպական կառույցներում Կիպրոսի Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Հայր Նեկտարիոս Իռանիուն և Խոսե Լուիս Բազան (Միգրացիայի գծով իրավական խորհրդատու, Կաթոլիկ եպիսկոպոսների Եվրոպական հանձնաժողով):

«Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունները Հայաստանում. հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով չորրորդ նիստը սկսվել է ՀՀ Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գրիգոր Մուրադյանի զեկույցով:

Այնուհետև բանախոսություններով հանդես են եկել նաև դոկտոր Թոմաս Մամուեյանը (Հայաստանում Ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան), Արտակ Զաքարյանը (ՀՀ ԱԺ Արտաքին հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ) և Տիգրան Մեսրոպյանը (ՀՀ Կառավարման ակադեմիա, քաղաքագետ):

Գիտաժողովի եզրափակիչ նիստի ընթացքում տեղի է ունեցել քննարկում «Եկեղեցու դերը ՀՀ հասարակական կյանքում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայի շուրջ: Թեմայի քննարկման շրջանակներում անդրադարձ է կատարվել կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերություններին, համատեղ ջանքերով փորձառությունների, մոտեցումների և տեսակետների փոխանակման անհրաժեշտությանը, ինչպես նաև Մայր Եկեղեցու իրավունքները ոտնահարող գործընթացների կանխարգելմանը վերաբերող հարցերի:

Գիտաժողովի ավարտին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը երախտագիտություն է հայտնել ներկաներին գիտաժողովին մասնակցության համար՝ ընդգծելով, որ նման միջոցառումները համատեղ փորձի փոխանակման միջոցով առավել պիտի նպաստեն երկխոսությունների զորացմանը:

Դրական գնահատելով և ամփոփելով երկօրյա գիտաժողովի արդյունքները՝ մասնակիցները կարևորել են նման գիտաժողովների գումարման շարունակական լինելը:

### 3. Article in Armenian

[http://www.1in.am/arm/armenia\\_society\\_223746.html](http://www.1in.am/arm/armenia_society_223746.html)

## Մայր Աթոռում իր աշխատանքն է ավարտել «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ» թեմայով գիտաժողովը

19:28 | 2013-10-20 | Հայաստան | Հասարակություն |



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ» հրամայականներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողովը հոկտեմբերի 19-ին ավարտեց իր աշխատանքները:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում «Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունների տարբեր մոդելներն այսօր» թեմայի շուրջ բանախոսեցին Սերգեյ քահանա Մատյուշինը (Ռուս Ուղղափառ եկեղեցի) և Ասատուր Նահապետյանը (Երևանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի): «Կրոնական ազատության բնագավառում միջազգային օրենքներն ու չափորոշիչները» թեմայի շուրջ զեկույցներով հանդես եկան դոկտոր Պետեր Կրոմերը (Ավստրիայի Ավետարանական եկեղեցու զեկավար), մագ. Էլիզաբետա Կիտանովիչը (Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս, Եկեղեցի և հասարակություն հանձնաժողովի մարդու իրավունքների գծով գործադիր քարտուղար), Եվրոպական կառույցներում Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Նեկտարիոս Բոանիոն և Խոսե Լուիս Բագան (Միգրացիայի գծով իրավական խորհրդատու, Կաթոլիկ եպիսկոպոսների Եվրոպական հանձնաժողով):

«Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունները Հայաստանում. հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով չորրորդ նիստը սկսվեց ՀՀ Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գրիգոր Մուրադյանի զեկույցով: Այնուհետև բանախոսություններով հանդես եկան նաև դոկտոր Թոմաս Մամուլեյանը (Հայաստանում Ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան), Արտակ Զաքարյանը (ՀՀ ԱԺ Արտաքին հարցերով մշտական հանձնաժողովի

նախագահ) և Տիգրան Մեսրոպյանը (ՀՀ Կառավարման ակադեմիա, քաղաքագետ):

Գիտաժողովի եզրափակիչ նիստի ընթացքում տեղի ունեցավ քննարկում «Եկեղեցու դերը ՀՀ հասարակական կյանքում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայի շուրջ: Թեմայի քննարկման շրջանակներում անդրադարձ կատարվեց կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերություններին, համատեղ ջանքերով փորձառությունների, մոտեցումների և տեսակետների փոխանակման անհրաժեշտությանը, ինչպես նաև Մայր Եկեղեցու իրավունքները ոսնահարող գործընթացների կանխարգելմանը վերաբերող հարցերի:

Գիտաժողովի ավարտին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը երախտագիտություն հայտնեց ներկաներին գիտաժողովին մասնակցության համար՝ ընդգծելով, որ նման միջոցառումները համատեղ փորձի փոխանակման միջոցով առավել պիտի նպաստեն երկխոսությունների զորացմանը: Դրական գնահատելով և ամփոփելով երկօրյա գիտաժողովի արդյունքները՝ մասնակիցները կարևորեցին նման գիտաժողովների գումարման շարունակական լինելը:

#### 4. Article in Armenian

<http://www.alttv.am/news/?p=3376>



## ՄԵՎՆԱՐԿԵՑ «ԵԿԵՂԵՑԻ -ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

18 Հոկտեմբեր, 2013

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հանդիսությունների սրահում այսօր մեկնարկեց «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հրամայականները և մարտահրավերները» թեմայով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, Քույր Եկեղեցիների հոգևորականներ, ՀՀ պետական կառույցների, ՀՀ և Եվրոպական համալսարանների, միջազգային քրիստոնեական և հասարակական կազմակերպությունների, Հայաստանի տարբեր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մայր Աթոռ Ս.Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը գիտաժողովի բացման իր խոսքում վստահեցրեց, որ քննարկումները կնպաստեն միջեկեղեցական և միջպետական փոխհարաբերությունների ամրապնդմանը: Բացի պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների ամրապնդումը, Եվրոպական

Եկեղեցիների կոնֆերանսի գլխավոր քարտուղար Գի Լիագրան ներկաների ուշադրությունը հրավիրեց կարևոր մի հանգամանքի վրա: Ըստ նրա, անկախ կրոնական պատկանելիությունից, պետք պահպանվի մարդու խղճի ազատության հիմնարար սկզբունքները: Գի Լիագրան գոհունակությամբ նշեց, որ Հայաստանն այն եզակի պետություններից է, որը քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն: Գիտաժողովը կազմակերպել է Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը, ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ:

5. Article in Armenian

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝

<http://168.am/2013/10/18/289618.html>

© 168 Ժամ առցանց լրատվական կայք



Մեկնարկել է «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովը | 14:35 | Հոկտեմբեր 18 2013 Տպել

Հոկտեմբերի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքն սկսեց «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպվել է Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի նախաձեռնությամբ և աջակցությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան: Իրենց մասնակցությունն են բերում Մայր Աթոռի միաբաններ, Քույր Եկեղեցիների հոգևորականներ, ՀՀ պետական կառույցների, ՀՀ և եվրոպական համալսարանների, միջազգային քրիստոնեական և հասարակական կազմակերպությունների, Հայաստանի տարբեր կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ: Գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությանը մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Սրբազան Հայրն իր խոսքում կարևորեց երկօրյա ժողովի անցկացումը Մայր Աթոռում՝ վստահություն հայտնելով, որ քննարկվող նյութերը մեծապես կնպաստեն միջեկեղեցական և միջպետական փոխհարաբերությունների առավել արդյունավորմանը: Բացման արարողությանը մասնակիցներին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի ողջույնի խոսքը փոխանցեց ԱԺ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը: ՀՀ ԱԺ նախագահի ուղերձում մասնավորապես ասված է. «Գոհունակությամբ եմ նշում այն փաստը, որ Հայոց Եկեղեցին հոգևոր արժեքների

պահպանման ու ամրապնդման նպատակով հետևողական քայլեր է իրականացնում: Մասնավորապես, օրեր առաջ գումարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողով, ինչը հայոց հոգևոր կյանքի առաջընթացի, աշխարհասփյուռ հայության համախմբման, միակամության և միաբանության վճռական ու կարևոր քայլ էր: Գովելի է, որ պատմական այդ կարևոր իրադարձությանը հետևում է եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին, առկա ու գալիք մարտահրավերներին և հրամայականներին վերաբերող այս համաժողովը: Բոլորիս է հայտնի Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու վեհ առաքելությունը մեր ժողովրդի քրիստոնեական դաստիարակության, հոգևոր արժեքների սերմանման, ամրապնդման ու ազգապահպանության գործում: Պատմական այդ առաքելությունը Մայր Եկեղեցին այսօր էլ շարունակում է իրականացնել Հայաստանի և աշխարհասփյուռ հայության հանդեպ՝ հավատարիմ մնալով մեր սուրբ հայրերի պատգամներին: Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, համոզված եմ, որ ազգային խնդիրները համատեղ ջանքերով լուծելու գիտակցումը և այդ նպատակով հայրենի պետության և եկեղեցու սերտ համագործակցությունը բխում է մեր համազգային շահերից: Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է զարգացման և առաջընթացի ուղի, որտեղ կարևոր են ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը, խոսքի և կրոնական ազատությունները: Այս առումով ես իմ գոհունակությունն եմ հայտնում, որ Հայաստանը, լինելով հնագույն քրիստոնեական արմատներ և մշակույթ ունեցող երկիր, մեծ հնարավորություններ ու պայմաններ է ստեղծել Հայաստանում գործող այլ կրոնների ու հարանվանությունների համար: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որի պատմական բացառիկ առաքելությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, ակտիվորեն մասնակցում է միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսություններին և մեծ դեր ունի ողջ աշխարհում հանդուրժողականության, սիրո և համագործակցության տարածման գործում: Այսօր էլ այս գիտաժողովի միջոցով Հայոց Եկեղեցին իր նպատակն է փորձում բերել ոլորտի օրենսդրական բարեփոխումների գործընթացին: Այս գիտաժողովի ընթացքում դուք քննարկելու եք եվրոպական տարբեր երկրների փորձը: Վստահ եմ, որ հարգելով խղճի և կրոնական ազատությունների մասին միջազգային սկզբունքները՝ հաշվի կառնեք նաև եվրոպական քաղաքակրթության մաս կազմող մեր երկրի կրոնական ու մշակութային յուրահատկությունները: Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, մեկ անգամ ևս ողջունելով՝ մաղթում եմ ձեզ հաջողություն և արդյունավետ աշխատանք»:

Այնուհետև, ողջունի խոսքով հանդես եկավ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտոր Գի Լիագրան՝ ընդգծելով այն բացառիկ դերակատարությունը, որ ունի Հայ Եկեղեցին էկումենիկ միջեկեղեցական կառույցների, մասնավորապես Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի աշխատանքներում: «...Հանդիպումն այստեղ կարևոր նշանակություն ունի: Նայելով պատմությանը՝ տեսնում ենք, որ Հայաստանը այն երկրներից է, որ մեծագույն գինն է վճարել մեր ընդհանուր արժեքների պաշտպանության համար, ինչը եղել է մասամբ իր աշխարհաքաղաքական դիրքի պատճառով: Հետևաբար, Ձեր գոյությունը ապացույցն է նրա, որ նվիրյալ քրիստոնեական հասարակությունը կարող է հաղթահարել ցանկացած մարտահրավեր: Իբրև Եկեղեցիներ՝ մենք պետք է ջանքեր գործադրենք ի պաշտպանություն մարդկային իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության: Մենք հավատում ենք, որ դավանանքի ազատությունը կարևոր է բոլոր մարդկանց համար: Անգամ եթե կրոնի ու խղճի ազատությունը տրվում է բազում միջազգային իրավական մարդու իրավունքների միջոցով, բոլորիս համար դեռ մեծ անելիք կա: Պետք է փոխադարձ հարգանք

զարգացնենք միմյանց նկատմամբ անկախ մեր պատկանելություննից...: Սրանում եմ ես տեսնում այսօրվա հասարակության մեծագույն մարտահրավերը», – իր խոսքում նշեց Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղարը՝ կարևոր նկատելով այս ամենում Եկեղեցիների սերտ համագործակցությունը: Առաջին նիստին զեկույցներով հանդես եկան պրոֆ. Մարկո Վենտուրան (Լյուվենի Կաթոլիկ համալսարանի Եկեղեցական իրավունքի ֆակուլտետ) և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական և Պաշտոնական մամուլի բաժնի տնօրեն Տ. Շահե վարդապետ Անանյանը:



<http://orer.eu/%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB-%D6%87-%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D6%83%D5%B8%D5%AD%D5%B0%D5%A1%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9/>

## «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» թեմայով միջազգային գիտաժողովը

20 հոկտեմբերի, 2013 | 17:09



Մայր Աթոռ- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողովը հոկտեմբերի 19-ին ավարտեց իր աշխատանքները:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում «Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունների տարբեր մոդելներն այսօր» թեմայի շուրջ բանախոսեցին Սերգեյ քահանա Մատյուշինը (Ռուս Ուղղափառ եկեղեցի) և Ասատուր Նահապետյանը (Երևանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի): «Կրոնական ազատության բնագավառում միջազգային օրենքներն ու չափորոշիչները» թեմայի շուրջ զեկույցներով հանդես եկան դոկտոր Պետեր Կրոմերը (Ավստրիայի Ավետարանական եկեղեցու զեկավար), մագ. Էլիզաբետա Կիտանովիչը (Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս, Եկեղեցի և հասարակություն հանձնաժողովի մարդու իրավունքների գծով գործադիր քարտուղար), Եվրոպական կառույցներում Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Նեկտարիուս Իոանիուն և Խոսե Լուիս Բագան (Միգրացիայի գծով իրավական խորհրդատու, Կաթոլիկ եպիսկոպոսների Եվրոպական հանձնաժողով):

«Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունները Հայաստանում. հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով չորրորդ նիստը սկսվեց ՀՀ Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գրիգոր Մուրադյանի զեկույցով:



Այնուհետև բանախոսություններով հանդես եկան նաև դոկտոր Թոմաս Սամուելյանը (Հայաստանում Ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան), Արտակ Զաքարյանը (ՀՀ ԱԺ Արտաքին հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ) և Տիգրան Մեսրոպյանը (ՀՀ Կառավարման ակադեմիա, քաղաքագետ):

Գիտաժողովի եզրափակիչ նիստի ընթացքում տեղի ունեցավ քննարկում «Եկեղեցու դերը ՀՀ հասարակական կյանքում. մարտահրավերներ և հեռանկարներ» թեմայի շուրջ: Թեմայի քննարկման շրջանակներում անդրադարձ կատարվեց կրոնական փոքրամասնությունների հետ հարաբերություններին, համատեղ ջանքերով փորձառությունների, մոտեցումների և տեսակետների փոխանակման անհրաժեշտությանը, ինչպես նաև Մայր Եկեղեցու իրավունքները ոտնահարող գործընթացների կանխարգելմանը վերաբերող հարցերի:

Գիտաժողովի ավարտին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը երախտագիտություն հայտնեց ներկաներին գիտաժողովին մասնակցության համար՝ ընդգծելով, որ նման միջոցառումները համատեղ փորձի փոխանակման միջոցով առավել պիտի նպաստեն երկխոսությունների զորացմանը: Դրական գնահատելով և ամփոփելով երկօրյա գիտաժողովի արդյունքները՝ մասնակիցները կարևորեցին նման գիտաժողովների գումարման շարունակական լինելը:



Նախօրեին, հոկտեմբերի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ.

Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռում անցկացվող Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ թեմայով միջազգային գիտաժողովի մասնակիցներին:

Հանդիպմանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց գիտաժողովի մասնակիցներին, կարևորեց նման գիտաժողովի անցկացումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց գիտաժողովի գումարման առիթով՝ ողջունելով Քույր Եկեղեցիների, Էկումենիկ կազմակերպությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը գիտաժողովին և իր գնահատանքը հայտնեց



գիտաժողովի

կազմակերպիչներին:

Վեհափառ Հայրապետը, կարևորելով գիտաժողովի շրջանակներում քննարկվող նյութը, վստահորեն նշեց, որ այն փորձառության փոխանակմամբ պիտի փոխադարձաբար զորացնի ժողովի մասնակիցներին, նպաստի համագործակցության ամրապնդմանը և երկրում ժողովրդավարական կառույցների հզորացմանը: «Գոհունակություն է մեզ համար հաստատել, որ Հայաստանում առկա է կրոնական ազատություն, որը երաշխավորված է օրենքով: Բնականաբար, Մայր Եկեղեցին առանձնահատուկ կարգավիճակ ունի այս երկրում, որպես Ազգային Եկեղեցի, ինչն ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ, որով կարևորվում է Հայոց Եկեղեցու դերը մեր ժողովրդի կյանքում...: Սակայն, Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակը երբեք խոչընդոտող հանգամանք չէ այլ կրոնական կազմակերպությունների և Եկեղեցիների համար, որոնք գործում են Հայաստանում», – ընդգծեց Նորին Սրբությունն իր խոսքում՝ մասնավորապես անդրադառնալով Հայ Եկեղեցու անդամակցությանը միջազգային Էկումենիկ կազմակերպություններին և Քույր Եկեղեցիների հետ սերտ հարաբերություններին:

Վերստին ուրախություն հայտնելով գիտաժողովի առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավետ ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին, որոնք մեծապես պիտի զորացնեն եկեղեցիների գործակցությունը՝ հանուն բարօր, արդար և խաղաղ աշխարհի:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց գիտաժողովի մասնակիցներին հուզող հարցերին:

Հանդիպումից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին Մատենադարանի դահլիճում ժողովականները ներկա գտնվեցին ասեղնագործ-գեղանկարիչ Մարիետա Մարտիրոսյան-Ալեքսանյանի Հոգու շարական խորագրով ցուցահանդեսի բացմանը:

7. video in Armenian – Shoghakat TV –official TV company of MotherSee, text in Armeian and English  
[http://www.youtube.com/watch?v=VT-vIHKFty4&feature=youtube\\_gdata](http://www.youtube.com/watch?v=VT-vIHKFty4&feature=youtube_gdata)

<http://www.youtube.com/watch?v=t4iEiOl1zm8>

## «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» խորագրով գիտաժողով

24/10/2013

Հոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն ավարտեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ գումարված «Եկեղեցի և պետություն փոխհարաբերություններ. հրամայականներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողովը: Երկօրյա գիտաժողովի ընթացքում «Եկեղեցի և պետություն փոխհարաբերությունների տարբեր մոդելներն այսօր» թեմայի շուրջ բանախոսեցին Սերգեյ քահանա Մատյուշինը (Ռուս Ուղղափառ եկեղեցի) և Ասատուր Նահապետյանը (Երևանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի):

## "Church and State Relations: Imperatives and Relations" Conference

24/10/2013

On October 19, with blessings from His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, the international conference "Church and State Relations: Imperatives and Relations" completed its sessions in the Mother See of Holy Etchmiadzin. During the two-day conference Rev. Fr. Sergey Matyushin (Russian Orthodox Church) and Mr. Asatur Nahapetyan (Armenian Evangelical Christian Baptist Church in Yerevan) conducted a discussion on "Various Modern Models of Church and State Relations".